ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲԸ
МИНИСТЕРСТВО ЭКОНОМИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО «НАЦИОНАЛЬНЫЙ ОРГАН ПО СТАНДАРТИЗАЦИИ И МЕТРОЛОГИИ»
MINISTRY OF ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA
«NATIONAL BODY FOR STANDARDS AND METROLOGY» CJSC

«12» օգոստոս 2024թ. ԱՊՀՄ-1570

Որոշում

N ԱՉԱՄ-2024/1 առ 09.08.2024թ

«ՖՈՒԴՍԻԹԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **«ԱՉԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/1»**

Մասնակից՝ **«ՖՈՒԴՍԻԹԻ» ՍՊԸ**

/ՀՎՀՀ՝ 01028873, հասցե՝ ք. Երևան, Նոր Նորքի 0090, Գայի պ./Շ/11/20/

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կարիքների համար բեռնատարների ձեռքբերման համար 04.07.2024թ. հայտարարվել է «ԱՉԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/1» ծածկագրով գնման ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել «ՖՈՒԴՍԻԹԻ» ՍՊԸ-ն: Հայտում ներառված Հավելված 1-ը ներկայացված էր սխալ և բացակայում էր էլեկտրոնային ստորագրությունը, ինչպես նաև բացակայում էր տեխնիկական բնութագիրը: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 23.07.2024թ. հանձնարարել ընթացակարգի քարտուղարին անհամապատասխանությունների շտկման ծանուցում ուղարկել «ՖՈՒԴՍԻԹԻ» ՍՊԸ –ին, ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ: «ՖՈՒԴՍԻԹԻ» ՍՊԸ –ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը մասամբ՝ ներկայացրել է Հավելված 1-ի ուղղված և էլեկտրոնային ստորագրված տարբերակը, սակայն տենիկական բնութագիրը ներկայացված էր մեր կողմից հրապարակված տեխնիկական բնութագիրը, առանց հստակեցնելու իր կողմից առաջարկող բեռնատարների տեխնիկական բնութագրով, ինչպես նաև շտկում ուղարկելու ժամանակ պետք է ներկայացվեր առաջարկվող ապրանքի մակնիշը, մոդելը, որը բացակայում էր: Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակից կազմակերպության հայտը գնահատվել է անբավարար:

Հիմնավորում

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 40-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տեղեկություններ՝ օգտագործվող էլեկտրոնային սարքավորումների մասին և կապ հաստատելու

նկարագրությունը, որը բացակայել է և առաջներդվելով Հրավերի 8.13 կետի համաձայն հայտը մերժվել է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով հրավերով սահմանված 8.13 կետի համաձայն և Օրենքի 6-րդ հոդվածի , այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

«ՖՈՒԴՍԻԹԻ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տնօրենի ժամանակավոր

պաշտոնակատար **Ա.ԲԱԲԱՅԱՆ**